**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1**
**№ ԳՀԱՊՁԲ-20-12/2-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան 05.03.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ-ն (համատեղ գործունեության պայմանագիր «Մակսիմ» ՍՊԸ-ի հետ)՝ ի դեմս ընկերության տնօրեն Ա. Առաքելյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև Վաճառող, մյուս կողմից՝ երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով 28.11.2019թ. կնքված № ԳՀԱՊՁԲ-20-12/2-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.14 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2. Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդի հանձնարարությամբ մատակարարել սույն Համաձայնագրով նախատեսված հեռուստասարքեր (այսուհետև՝ Ապրանք) համաձայն № 1 Հավելվածով սահմանված ապրանքներիգնման ժամանակացույցի, իսկ Վաչառողը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքների արդյունքները և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ Հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում: Ապրանքների տեխնիկական բնութագիրը սահմանված է Պայմանագրով:

## 2. Գինը և վճարման կարգը

2.1 Համաձայնագրով Վաճառողի մատակարարման ենթակա ապրանքների գինը կազմում է 16799988 (տասնվեց միլիոն յոթ հարյուր իննսունինը հազար ինը հարյուր ութսունութ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդը մատակարարած ապրանքների դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով՝ Պայմանագրի 3.2 և սույն համաձայնագրի N 2 Հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցով սահմանված կարգով:

## 3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ապրանքների հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.4 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ Տ և ՀԿ վարչությունը:

## 4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան Բագրևանդի 5 | ՀՀ, Արագածոտն, 0208, Ավան, 2/S/, 5փ, 1 փակ |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Էվոկաբանկ» ՓԲԸ, Կիևյան մ/6 |
| Հ/Հ 900011024537 | Հ/Հ 1660006756360100 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 05023335 |
| ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏ | տնօրեն |
| Ն. ՅՈԼՉՅԱՆ | Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ |

*Հավելված N 1*
*№ ԳՀԱՊՁԲ-20-12/2-1 պայմանագրին կից N 1 Համաձայնագրի*

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/Հ | Անվանումը | Չ/Մ | Քանակը | Միավորի գինը/դրամ/ | Ընդհանուր գինը/դրամ/ | Մատակարարման ժամանակացույց |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Հեռուստասարքեր | հատ | 2 | 8399994 | 16799988 | 2020թ 1-ին եռամսյակ |

*Հավելված N 2*
*№ ԳՀԱՊՁԲ-20-12/2-1 պայմանագրին կից N 1 Համաձայնագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | CPV դասակարգման կոդը | Վճարումը կիրականացվի 2020թ. ըստ ամիսների, ընդ որում՝ | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ |
| 1 | Հեռատասարքեր | 32321210/516/10/2 | 16799988 | 16799988 | 16799988 | 16799988 | 16799988 | 16799988 | 16799988 | 16799988 | 16799988 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:

**ԳՆՈՐԴ**
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**
«Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ
տնօրեն

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ